էօծ զնա կաթուղիկոս։ Գրեաց յայնժամ եղիազար թուղթ Օրհնութեան առ ամենայն Հայս եղեալս ընդ Տէրութեամբ Օսմանցւոց, եւ յայտ արարեալ նոցա զիշխանութիւն իւր՝ զոր ընկալաւ Թագաւորական հրովարտակաւ, յորդորեաց զամենեսին կալ սիրով ընդ իւր, խոստացեալ նոցա առնել բազում բարիս, և ըստ ժամանակին առաքել ՚ի ձեռն Նուիրակաց զմիւռոնն ձրի, առանց իրիք նուիրաց և տրոց, և ինքն եղեալ գնաց յԵրուսաղէմ։ Եւ մինչդեռ ինքն էր ՚ի Բերիա՝ գրեաց գիր գանկատանաց առ Եպարքոսն, եւ առաքեաց զայն ՚ի ձեռն պատգամաւորի, ամբաստան լինելով զնուիրակաց Էջմիածնի. զի ըստ արամադրութեան Արքունի հրովարտակին ասէ՝ որ յառաջագոյն չնորհեցաւ ինձ, զի երուսաղէմ և եթէ տեղի ընդհանուր քրիստոնէից, և ամենեքեան գան անդր, և Հայք որք բնակեալ են ՚ի կողմանս Ասիոյ և Եւրոպիոյ ՚ի Պետութեան ձեր՝ են ընդ հոգեւոր իշխանութեամբ իմով, եւ չէ օրէն օտարաց և այլոց՝ առանց գիտութեան իմոյ ձեռն արկանել յեկեղեցական իրս եւ փոխել զպաշտօնեայս նորա հակառակ Բարձրագոյն հրամանին, որ չնորհեալ է ինձ ՚ի գանձարանէ (մալիյէ)։ Իսկ այժմ վարդապետք Պարսկաստանի չրջեալ ՚ի գաւառս Օսմանեան Պետութեան՝ ընդդէմ օրինաց եւ կանոնի չփոթեն զգործս ժողովրդոց. ժողովեն զդրամս բռնութեամբ, և հասուցանեն զրկանս և անիրաւութիւնս ազգին՝ պատճառելով զմիւռոնն. և ապա խնդրէ հանել զնոսա ՚ի սահմանացն Օսմանցւոց։ Գրեցաւ հրովարտակ վասն այսր առ ամենայն դատաւորս քաղաքացն Ասիոյ, ՚ի Տիգրանակերտ, ՚ի Վան, ՚ի Կարին, ՚ի Սեբաստիա և յայլ տեղիս, առնել ըստ գանկատանաց եղիազարու եւ մերժել զնուիրական Էջմիածնի ՚ի սահմանաց անտի։ Յելս ձէմազիլ էվվէլ ամսոյ՝ ՌՀՀ (1666)։

Ի ժամանել թղթոց եղիազարու յայլև այլ տեղիս, անկաւ երկպառակութիւն ՚ի մէջ ժողովրդոց. կէսք ՚ի կողմն Յակոբայ կաթուղիկոսին Էջմիածնի, և կէսք՝ մանաւանդ թէ յօրվք՝ ՚ի կողմն եղիազարու, և կոչէին զիրեարս Յակոբեան և Եղիազարեան։ Լուեալ Յակոբայ կաթուղիկոսի ընդդործսն եղիազարու՝ ՚ի կասկածի եղեւ սակս խռովութեան. գրեաց նամակս խրատականս յայլև այլ կողմանս